



Հետաքրքիր է իմանալ

Օրգանիզմների, այդ թվում նաև մարդու վրա արտաքին մթնոլորտային ճնշումը հավասարակշռվում է օրգանիզմների ներքին, այսպես կոչված արյան ճնշումով:

Մարդը և մյուս կենդանի օրգանիզմները լավ հարմարվել են նորմալ մթնոլորտային ճնշմանը(760 մմ սնդ. ս.): Երբ վերջինս փոխվում է մարդու ինքնազգացողությունը վատանում է: Մթնոլորտային ճնշման նվազումը հարկապես վար է անդրադառնում զարկերակային ցածր ճնշում ունեցող մարդկանց՝ հիպոտոնիկների վրա: Նրանք կարող են գլխապտույտ, սրտխառնոց, ընդհանուր թուլության զգացողություն ունենալ: Այս ախտանշանների ուժեղ արտահայտման դեպքում ցանկալի է օգտագործել զարկերակային ճնշումը կարգավորող դեղամիջոցներ: Օգնում է նաև թունդ թեյը:

Մթնոլորտային բարձր ճնշումը վար է անդրադառնում արյան բարձր ճնշում ունեցողների՝ հիպերտոնիկների վրա: Այս մարդիկ զգում են շնչառական դժվարություն, պոլսի հաճախացում, ընդհանուր թուլություն և աղմուկի զգացողություն ականջներում: Նման դեպքերում խորհուրդ է տրվում օգտագործել ճնշումը իջեցնող դեղեր, ինքնազգացողության վատթարացման դեպքում՝ դիմել բժշկի: